## 54. ՎԱԽՏՆ Ա ԽԱԲԱՐ

Ասում ա, մի հետ տղան կյամ ա տոն, հորն ասում. «Ա՛ հա̈ր, իժան ողտ ըն ծախում, մինը տասսը մանեթ, փող տո, քյինամ մին ջաննեն առնեմ»։

— Թա̈նգյ ա, բա՛լա, կարել չընք առնինքյ։

Անց ա կենում մին էրկու տարե, հա̈րը տղեն ասում ա. «Բա՛լա. ողտ ըն ծախում, քյինա տես քանի՞ յըն ասում»։

Տղան քյինամ ա, կյամ, ասում. «Ա՛ հա̈ր, թա̈նգյ ա, մինը հա̈րո̈ւր մանեթ ըն ասում»։

— Թա̈նգյ չի. թանգյ չի, վըե՛րթի, քյինա մին քանինն առ։

Տղան ասում ա. «Ա՛ հա̈ր, ես ղատ չըմ հըսկանում քյըղանա, մինը տասսը մանեթան ասում ըս թանգյ ա, ամա մինը հա̈րո̈ւր մանեթան ասում ըս թանգյ չի»։

— Վախտն ա խաբար, էն վախտը փող չունինքյ, օղտը տասսը մանեթան թանգյ ար։ Էնվեր ա մհենգյ, վըեր փող օնինքյ ողտեն մինը հա̈րո̈ւր մանեթան իժա̈ն ա։